


Ս. ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑԻ
ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԵԿԵՂԵՑԻ
Գլխավէմտ, Օհայօ



ST. GREGORY OF NAREK
ARMENIAN APOST. CHURCH

666 Richmond Road
Cleveland, Ohio 44124, U.S.A.

Հովիւ-Վարդէն Ծ. Վրդ. Գրաբարսեան

Area Code 216—Tel. 381-6590

Pastor—Very Rev. Vasken Kebreslian

Դեկտեմբեր 31, 1964

ՀՈԳԵԻՈՐ ՀՈՎԻԻԻ ՏԱՐԵԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ

Յարգելի Ծիականներ,

Գրեթէ տարի մըն է որ ձեզ հետ եմ իբրեւ ձեր հոգեւոր առաջնորդը, դաս-տիրարակիչը, կամ որպէս մէկը որուն կը վստահիք ձեր հարցերը, ըլլան անոնք ազգային, կրօնական, ընտանեկան, ընկերային կամ անձնական: Այս ժամանակը թաց-քին փորձած եմ օգնել իւրաքանչիւր անձի կամ խումբի որքան որ կրնայի:

Գիտեմ թէ պայմանները որու մէջ կ'ապրինք բաւական անորոշ են, եթէ նկատի ունենանք մեր յետին նպատակները: Կրնամ ըսել թէ չեմ գտած այնքան արդիւնք որքան որ կ'ակնկալէի: Այս ըսելով չեմ ակնարկեր անոնց որոնք իրենց կարելիք կը փորձեն մեր բոլոր ճիգերու ընթացքին: Բայց իրականութիւնը այն է որ որպէս 1000 հոգինոց համայնք մը կրնայինք շատ աւելին ընել: Ամէն պարագայի գոհութիւն կուտամ Աստուծոյ որ միշտ Հայաստանեայց Եկեղեցիով հետաքրքր-ուողները շատ բան ըրած են այս գաղութիս մէջ: Թերեւս ես իրաւունք չունիմ շատ պահանջելու նկատի առած որ համայնքս նոր կը կազմակերպուի: Միայն սա կուզեմ շեշտել թէ եթէ մեր գոյութիւնն ու տեւականացումը իմաստ մը ունին մեզ համար որպէս Հայ-Ամերիկացի Քրիստոնեաներ, ուրիշ խօսքով որպէս Հայաստանեայց Եկեղեցի, անհրաժեշտ է որ մեծ գոհողութիւններ աչք առնենք եւ պէտք է ըսեմ թէ կը հիանամ ձեզմէ անոնց վրայ որոնք շատ բան գոհած են գերագոյն նպատակներու համար: Թող Աստուած հազարապատիկ կերպով վարձատրէ ձեզ: Կրօնական, ազգային եւ տնտեսական մարզերու մէջ յաջողելու համար միշտ լաւագոյնը պէտք է կիրարկել եւ այս բոլորը կարելի է ընել փորձելով ապրիլ որպէս հաւատարիմ Հայ Քրիստոնեաներ, փորձելով սորվիլ հայ լեզուն, հայ մշակոյթը, հայ աւանդութիւնը: Պէտք է փորձել միշտ Աստուծոյ առջեւ ներկա-յանալ Եկեղեցիին մէջ եւ պէտք է փորձել նիւթապէս ու բարոյապէս նեցուկ կանգնիլ մեր գերագոյն դատին համար որ է մեր ինքնութեան պահպանումը:

Այս անցեալ տարուայ ընթացքին, մասնաւորապէս ապրիլէն վերջ երբ իմ եւ ձեր միջեւ շփումները յաճախակի դարձան, անշուշտ թէ գաղափար մը կազմեցիք իմ մասին ինչպէս որ ես ըրած եմ ձեր մասին եւ կը խորհիմ թէ ձեզմէ իւրա-քանչիւրը բաւական լաւ ճանջած եմ եւ ատոր համար է որ կը ըսեմ թէ այս գաղութը ընդհանուր կերպով կրնայ աւելին ընել: Յաճախ մեր կարգիքները կըր-նան հակասիչ ըլլալ բայց այս կարծեաց տարբերութիւնը պէտք է արգելք ըլլայ մեր գործի ընթացքին: Ամէն ոք ինքզինք պէտք է քննէ թէ երբ որոշ քննադատու-թիւններու կ'ենթարկուի այս իրականութիւնը իր ազգային կեանքի ճամար աշխատելու կը վնասէ թէ ոչ: Պէտք է ցստակ ըլլայ մեր մտքին մէջ որ երբ կը գործենք երբեմն կը սխալինք եւ երբ սխալինք կրնանք քննադատուիլ: Երա-նելի են անոնք որոնք հարցերը լայնամտօրէն կը դիմաւորեն: Եւ երանի թէ բոլոր քննադատութիւնները շինիչ ըլլային:

Այս անցնող տարուայ ընթացքին համայնքս օժտուեցաւ Եկեղեցիով ու եկեղե-ցականով եւ կազմակերպեալ գործունէութեամբ: Տիրացու ներսէս Ա. Սրկ. ձե-պեճեան գաղութէս մեկնեցաւ ապրիլի վերջը: Ցաւալի էր որ իր ծառայութենէն զրկուեցաւ համայնքս: Ծնորհակալութիւն իրեն այն ամէն ինչին համար զոր ըրաւ այս համայնքիս բարեօրման համար: Ձեմ մոռնար շնորհակալութիւն

յայտնելու նաեւ ձեզմէ իւրաքանչիւրին որ փորձած էք օգտակար ըլլալ ինծի կա՞մ եւ մանաւանդ այս գաղութին: Կը յուսամ այս բոլորը ըրած էք որպէս արդիւնք ձեր պարտաճանաչութեան: Եթէ եկեղեցականը կամ եկեղեցին բարձր դիրքի վրայ կը մնան իրենց խոնարհութեան հետ մէկտեղ, գնահատանքը կ'երթայ ձեզի որ փորձած էք լաւագոյնը ընել պայմանները բարւոքելու համար: Բայց տակաճին շատ բան կայ ընելիք եւ կը յուսամ չէք յուսահատիր: Ժամանակի ընթացքին մեր շուրջի համայնքները մեզ աւելի լաւ պիտի ճանչնան: Դժբախտութիւն է որ մեր արեւակիցներէն շատեր հետաքրքրութիւն չեն ցուցներ կամ անհոգ են իրենց եկեղեցիին կամ անցեալին հանդէպ եւ ուրիշներ այս մեր եկեղեցին օտար կը նկատեն: Զեզի կը վստահեցնեմ թէ այսպիսի դիրքեր կրնան արգելք ըլլալ մեր հոգեւոր ու բարոյական յառաջխաղացման եւ այս կըսեմ խոր ցաւով:

Այս փոքր խորհրդածութենէն վերջ կը դառնամ իմ գործունէութեանս այս համայնքիս համար: **Թորոնթոն** քաղաքին մը որմէ մասն մը կ'երեւի եւ մաս մըն ալ չերեւիր: Նախ պէտք է յայտարարեմ թէ Ծխական խորհուրդին հետ մասնաւոր դժուարութիւններ չեմ ունեցած եւ իրենց հետ մէկտեղ կարելիս ըրած եմ: Ներկայ եղած իմ Ծխական խորհուրդի բոլոր ժողովներուն ինչպէս նաեւ Երեսմեան Յանձնախումբի ժողովներուն: Երկուքն ալ որպէս առանձինն վարչութիւններ միշտ թելադրութիւններս յարգած են եւ գործած ըստ այնմ: Նախագահած եմ եկեղեցասէր Հայ տիկնանց Միութեան ժողովներուն եւ մեծաւ մասամբ Երիտասարդ Հայ Տիկնանց Միութեան ժողովներուն, Դպրաց դասի ժողովներուն եւ Հայ Երիտասարդաց կազմակերպութեան քանի մը ժողովներուն: Ուրախ եմ որ շուտով պիտի ունենանք Կրտսեր Հայ Երիտասարդաց Մասնաճիւղ մը այդ գաղութիս մէջ: Օրական գործելապլրպս խնամքով պատրաստած եմ ըստ հետեւեալին: Առաւօտները տնտեսական գործերու յատկացուցած եմ յաճախ ծխատունէն դուրս ըլլալով: Կէսօրէ վերջերը մնացած եմ Ծխատուն գրասենեակի գործի եւ զանազան յարաբերութեանց համար ծուխիս անդամոց հետ: Իսկ գիշերները յատկացուած էին կամ ժողովներու եւ կամ ալ ընտանիքներու այցելութեանց:

Այցելութիւնք:

Մէկ բացառութեամբ այցելած եմ բոլոր տրափու անդամներու տուները ինչպէս նաեւ տունները շատ մը հայ ընտանիքներու: Այս այցելութեանց գումարը եղած է 125 որմէ 15ը հիւանդանոցի այցելութիւններ են հիւանդանոցներու մէջ: Բանի մը ընտանիքներու այցելած եմ մէկ անգամէ աւելի զանազան պատճառներով: Զատկուայ շրջանին օրհնած եմ նաեւ քանի մը ընտանիքներու տունները:

Պաշտամունք

Ապրիլ 12էն ի վեր, երբ մեր եկեղեցին Օծուեցաւ Թեմիս Առաջնորդին կողմէ, եկեղեցական պաշտամունք ունեցած ենք ամէն կիրակի բայց այն կիրակիներէն երբ հիւանդանոց էի եւ չուրեմբեր 11էն երբ Դպրաց դասի ժողովներուն մասնակցեցայ Թորոնթոյի մէջ: Առաւօտեան ժամերգութիւնը կը սկսի ժամը 10ին եւ Ս. Պատարագը ժամը 10.30ին: Անշուշտ գիտէք թէ մեր արարողութիւնները կրճատած ենք նկատի առած տեղական պայմանները: Պատարագներու ընթացքին միշտ քարոզած եմ հայերէն կամ անգլերէն: Երկու լեզուով չէի խօսէր նկատի առած ժամանակը: Բանի մը կիրակիներ ունեցած ենք նաեւ մասնաւոր արարողութիւններ ինչպէս Հայրապետական մաղթանք, շրօրհնէք, հոգեհանգիստ եւ այլն: Երանի եկեղեցիին մէջ սպասք կողմերուն թիւը աւելի ըլլար եւ աւելի կանոնաւոր: Խորանին վրայ սպասարկողները եղած են Պր. Կ4 Պալտըրեան, Տօքթ. Գ. Կէօքճեան, Պր. Զ. Զէքէմեան եւ երբեմն ալ Պր. Զ4 Ասատուրեան: Եւ դպրաց դասը ղեկավարուած է Պր. Ս. Սարաճեանի կողմէ օրկանի ընկերակցութեամբ Տիկ. Թ. Զէքէմեանի Պէտք է յիշել նաեւ երկու մոմակալները, Թ. Աթթեան եւ Մ. Միլիթարեան որոնց բացակայութիւնը զգալի է: Մեր դպրաց դասը անշուշտ իր կարելին կընէ բայց կը յուսանք եւ կանկնկալենք որ ուրիշներ ալ միանան անոնց եւ ներդաշնակ երգեցողութիւն մը ունենանք:

Տոյիս 17-իւ Տ. Գրիգորի Ժեյ. Պակարագ պաշտարար Տոյուցս Ե:

Ծէս եւ Խորհուրդ

1964 տարուայ ընթացքին ունեցած ենք 12 մկրտութիւն եւ 5 պսակ որուն մէկը կատարուեցաւ Տիթրոյթի Հայոց եկեղեցին եւ մէկն ալ հոս Յիւնաց եկեղեցւոյ մէջ: Բոլոր պսակներու ատեն ալ խրատական խօսած եմ: Ունեցած ենք նաեւ 5 մահեր ու թաղման ատեն նորէն դամբանական խօսած եմ: Տարուան ընթացքին դժբախտութիւնը նաեւ նախ շէնքիս տնտեսը Վահան Կարապետեանը կոսնցնելու եւ ապա Ծիսական Խորհուրդի Եռանդուն աշխատողներէն Արմէն Գասապաշեանը կոսնցնելու: Թող Աստուած անոնց հոգիները լոյստերու փէջ հանգչեցնէ: Յիշատակի օրուայ ընթացքին Հայլէնտ Գերեզմանատունը այցելեցի եւ քանի մը շիրիմներու վրայ հոգւոց կարգացի:

Մշակութային:

Անշուշտ թէ մշակոյթը մեծ կարեւորութիւն ունի մեզ համար: Ներկայ եղած եմ բոլոր մշակութային ձեռնարկներուն որոնք են Սայաթ նովայի օր, Եղեռնի օր, Մշակութային օր, Վահան թէքէեան դպրոցի օր. *Արարուհի օր.* Հոս պէտք է նշել նաեւ թէ Հայերէնի դասաւանդութիւնները կը շարունակուին ուրբաթ իրիկունները եւ արդիւնքը քաջալերական կը թուի: Եթէ փափաքողներ կան կրնանք շաբաթ օրերն ալ հայերէնին պահ մը յատկացնել:

Զանազանք:

Ներկայ եղած եմ Ծիսական Խորհուրդիս երկու բացօդեայ ճաշկերոյթին, Կիրակնօրեայ դպրոցի, Եկեղեցասէր հայ տիկնանց Միութեան, Ռամկավար ազատ Կուսակցութեան, հայ բարեգործականի եւ Վարդանանց Ասպետներու բացօդեայ ճաշկերոյթներուն: Ներկայ եղած եմ Հայ երիտասարդաց տարեկան պարահանդէսին եւ Հայ բարեգործականի Գլխավէնտի մասնաճիւղի տարեկան ժողովին:

Ապրիլի վերջաւորութեան դժբախտութիւնը ունեցայ ինքնաշարժի արկածի մը ենթարկուելու որը զիս զրկեց թեմական տարեկան համագումարին մասնակցելէ եւ ձեզի ալ մեծ մտահոգութիւն պատճառեց: Ուրախ եմ որ համայնքիս թեմական պատգամաւորը յանձին Տօքթ. Գ. Կէօքճեանի ներկայ եղաւ այդ համագումարին:

Յուլիսին ներկայ եղայ եկեղեցականաց տարեկան ժողովին: Այս ժողովին նպատակն է իրար քով գալ եւ լաւագոյն միջոցներու մասին խորհիլ մեր ժողովուրդին օգտակար ըլլալու համար: Հոկտեմբերին ալ ներկայ եղայ դպրաց դասի Կազմակերպութեան թորոնթոյի մէջ:

Փարոս

1964 տարուայ ընթացքին Փարոսի 11 հրատարակութիւն ունեցանք: Գիտէք թէ այս թերթիկը ոչ միայն լուրեր կուտայ համայնքիս մասին բայց նաեւ լուրեր կուտայ Հայոց. Եկեղեցւոյ, իր սովորութեանց եւ օրէնքներու մասին եւ այլն: Հաղորդագրութեան միջոցմըն է նաեւ Եկեղեցիին եւ համայնքիս զանազան անդամներուն հետ: Որպէս այս թերթիկին հրատարակիչը շնորհակալութիւն կը յայտնեմ բոլոր անոնց որոնք զանազան ձեւերով ստատրեցին սոյն թերթիկի հրատարակման: Դեկտեմբերէն սկսեալ Փարոս ղրկած եմ Գլխավէնտի բոլոր հայերուն որոնց անունը հայ հեռախօսական գրքոյկին մէջ կայ: Երբ գիտնանք թէ իրապէս ով կը հետաքրքրուի այս թերթիկով մասնաւոր ցուցակ մը պիտի կազմենք եւ ըստ այնմ արաքումները ընենք: Պէտք է նշել թէ Փարոսի համար եղած նուիրատուութիւնները ծախքերը չեն գոցած:

Այս անթիւ պարտք կը համարիմ շնորհակալութիւն յայտնել Ծիսական Խորհուրդոյ Ատենապետ Տօքթ. Գ. Կէօքճեանին եւ միւս անդամներուն, Հայ Եկեղեցասէր Տիկնանց Միութեան 1964ի Ատենապետին եւ իր վարչութեան, Հայ Երիտասարդ Տիկնանց կազմակերպութեան անցեալի եւ ներկայի ատենապետներուն եւ իրենց վարչութեանց Կիրակնօրեայ Վարժարանի վերահսկիչ Տիկ. Գ. Կէօքճեանի եւ իր իւսուցչական կազմին Դպրապետին եւ դպրաց դասին, Ս. Սեղանի ծառայողներուն եւ բոլոր անոնց որոնք հետոս աշխատեցան մեր համայնքի ընդհանուր բարելաւման համար:

Ապագան

Ապագամ մեր ժողովուրդին է եթէ անոնք միշտ փորձեն կացութիւնը բարելաւել:

• Յոճույն վտարելով իր վրիպիւմը մտադրեալ
ընդունելով մեծ • Նմա • Ա ղնչեմա

• ժողովը ժողովն ընդ ժողովը մտնելով ժողովը մտնելով ժողովը
տղ ղնչու ղնչու ղնչու ղնչու ղնչու ղնչու ղնչու ղնչու ղնչու ղնչու
- ժողովը ղնչու ղնչու ղնչու ղնչու ղնչու ղնչու ղնչու ղնչու ղնչու
: ժողովը ղնչու ղնչու ղնչու ղնչու ղնչու ղնչու ղնչու ղնչու ղնչու
• ժողովը ղնչու ղնչու ղնչու ղնչու ղնչու ղնչու ղնչու ղնչու ղնչու

• ժողովը ղնչու ղնչու ղնչու ղնչու ղնչու ղնչու ղնչու ղնչու ղնչու
: ղնչու ղնչու ղնչու ղնչու ղնչու ղնչու ղնչու ղնչու ղնչու
: ղնչու ղնչու ղնչու ղնչու ղնչու ղնչու ղնչու ղնչու ղնչու
: ղնչու ղնչու ղնչու ղնչու ղնչու ղնչու ղնչու ղնչու ղնչու

• ղնչու ղնչու ղնչու ղնչու ղնչու ղնչու ղնչու ղնչու ղնչու
: ղնչու ղնչու ղնչու ղնչու ղնչու ղնչու ղնչու ղնչու ղնչու
: ղնչու ղնչու ղնչու ղնչու ղնչու ղնչու ղնչու ղնչու ղնչու
: ղնչու ղնչու ղնչու ղնչու ղնչու ղնչու ղնչու ղնչու ղնչու